## Բ. ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

,,___,, __________ 2013թ. **ՈՐՈՇՈՒՄ** թիվ ________Ն

### ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով, ,,ՀՀ բյուջետային համակարգի մասին,, ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով, համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետիª

Վանաձորի համայնքի ավագանին

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ է.

1. Հաստատել Վանաձորի համայնքի **2014** թվականի բյուջենª

**1.1. Եկամուտների գծով - 2338524.0 հազ.դրամ**

այդ թվումª

* վարչական բյուջեի մասով - 2286506.0 հազ.դրամ,

* ֆոնդային բյուջեի մասով - 102475.0 հազ.դրամ:

**1.2. Ծախսերի գծով - 2338524.0 հազ.դրամ**

այդ թվումª

* վարչական բյուջեի մասով - 2286506.0 հազ.դրամ,

* ֆոնդային բյուջեի մասով - 102475.0 հազ.դրամ:

2. Հաստատել Վանաձորի համայնքի 2014թ. բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակներիª համաձայն հավելված թիվ 1-ի:

3.Հաստատել Վանաձորի համայնքի 2014թ. բյուջեից հատկացումները ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգմանª համաձայն հավելված թիվ 2-ի:

4.Հաստատել սույն որոշման 3-րդ կետով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակները ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգմանª համաձայն հավելված թիվ 3-ի:

5.Հաստատել սույն որոշման 3 և 4 կետերով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսերն ըստ առանձին խմբերիª համաձայն հավելված թիվ 8-ի:

6. ,,ՀՀ բյուջետային համակարգի մասին,, ՀՀ օրենքի 33 հոդվածի 3-րդ կետի համաձայն թույլատրել համայնքի ղեկավարին 2014 թվականին անհրաժեշտության դեպքում, սույն որոշման 1-ին կետով հաստատված հատկացումների ընդհանուր գումարի 3 տոկոսի սահմաններում վերաբաշխել դրանք:

7. Համայնքի 2014 թվականի բյուջեի կատարման ընթացքում պաշտպանվածության են ենթակա և լրիվ ծավալով ֆինանսավորվում ենª

ա) աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումները.

բ) սանմաքրումը, աղբահանությունը.

գ) մշակութային և սպորտային միջոցառումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ն. ՍԱՐԴԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՍԻՄՈՆՅԱՆ

ՖԻՆԲԱԺՆԻ ՊԵՏª Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՃԱՐՏ. ԵՎ ՔԱՂ. ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Տ. ՊԱՊԱՆՅԱՆ

ԳՈՒՅՔԻ ԿԱՌ. ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԻՍՊԻՐՅԱՆ

ԿՈՄ. ՏՆՏ. ԵՎ ԲԱՐԵԿ. ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Լ. ՄԵԼԻՔՅԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՖԻԶ. ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ՄԱՅԱԿՅԱՆ

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍ., ՏՐԱՆՍՊՈՐՏԸ
ՀԱՄԱԿ. ԲԱԺՆԻ ՊԵՏ Է. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հ ԵՎ ԲՏ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ՊԱՌԱՎՅԱՆ

ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՐՏ. ՀԱՐԱԲ.
ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԲՆԱԿՖՈՆԴԻ ՀԱՇ. ԵՎ ԲԱՇԽՄԱՆ
ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ՄԱՅԻԼՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Հ. ԴԱՎԹՅԱՆ